

զայս ծանօթութիւն հաղորդել Պատրիարքին եւ անգղային գերագոյն ժողովոյն 'ի տեղեկութիւն , ('ի 18 Հոկտեմբերի . 1882) :

Այսու եղանակաւ կարգաւորեալ Ա.Ֆիֆ Պէյին դարձարար 'ի Կոստանդինուպօլիս , եւ տուաւ հրովարտակ (Սաթ-թի Շէրիֆ) Յունաց , զորոյ թարգմանութիւնն զօգեմք աստանօր :

Միացեալ նահանգաց Երուսաղէմի Հաֆըզ Ահմէտ Փաշայի , Դատաւորին , Դեհալետին , եւ այլոց անդամաց ժողովոյն հրաման :

Յաղագս լուծելոյ եւ կարգաւորելոյ զվէճս եւ զհակառակութիւնս Յունաց եւ Լատինաց , 'ի պատճառս Ա. Տեղեաց ոմանց , որք գտանին 'ի Քաղաքին Երուսաղէմի եւ արտաքոյ նորին ԱՅՂԱ յամին եւ 'ի վերջ Ճէմաշէլ եւ Էլէլ ամսոյ թուականաւ դրեալ եւ Կայսերական ձեռագրով վաւերեալ առ քեզ եւ առ այլս ուղղեալ հրովարտակիս ոմանք 'ի յօգուածոց նորին տակաւին անդործադրելի մնալն այս անգամ Տէրութեանս յայտ արարին , որովհետեւ Կայսերական մեծութիւնս նոյն հանգամանաց գործադրութիւնն պահանջէ , քննեալ 'ի ժողովի Նախարարաց , 'ի բացայայտութիւն եւ 'ի հաստատութիւն եւ կատարեալ որոշումն նոյն հրովարտակին , 'ի վեց յօդուածէ բաղկացեալ եւ յօրինեալ 'ի վերայ թղթի միոյ : Թէպէտ եւ տուաւ Լատինաց Բեթղէհէմի եկեղեցւոյ մեծի դրան մի բանալի , բայց նոցա ըստ առաջին սովորութեան իւրեանց 'ի միջոյ եկեղեցւոյն անց ուղարձի իրաւունքն ոչ է տուեալ , եւ 'ի մէջ եկեղեցւոյն օրինաց կատարում , եւ 'ի ժառանգութեան ընդ Յունաց ընկերովի իրաւունքն ոչ է տուեալ , եւ ընդ սմին սակս չխանդարելոյ զարդի վիճակ եկեղեցւոյն այնորիկ , եւ 'ի մէջ նորին Լատին ազգին օրինաց կատարում , վերջապէս 'ի միջոյ եկեղեցւոյն յԱյրն երթեւեկելոյ մասին , եւ յայլ կողմանէ , եւ ոչ միոյ կողման 'ի նորոյ զիրս ինչ հնարելով , 'ի սկզբանէ մինչեւ ցայսօր գործադրեալ սովորութիւնն փոխելոյ հրաման ոչ է տուեալ : Որովհետեւ դռնապան եկեղեցւոյն այնորիկ 'ի վաղուց անտի հպատակ Տէրութեանս Յոյն քահանայ գոլով , այլ սոյն դռնապանն չունի երբէք իշխանութիւն արդելու զայնոսիկ ազգս որք 'ի սկզբ